Հավելված N 2
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի 2022 օգոստոսի 05-ի N 101-Ա/1 հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԵՌԱԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՌՊ -1- 1083-2022

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍԱՆՁԱՁԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԳՈՐԾԱՁՈՒՐԿ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան **«29» նոյեմբեր 2022 թ.**

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության **Նոր Նորքի և Ավանի տարածքային կենտրոնը, այսուհետ՝ Տարածքային կենտրոն, ի դեմս տնօրեն ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԳԱՐ ԿՈՐՅՈՒՆԻ,** որը գործում է Միասնական սոցիալական ծառայության Նոր Նորքի և Ավանի տարածքային կենտրոնի կանոնադրության հիման վրա, մի կողմից,

«Կարեն Կարապետյան» ԱՁ, պետական գրանցման համար 278.05500, 17.02.2005թ.

(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, պետական գրանցման օրը, ամիսը, տարին, պետական գրանցման վկայականի համարը, կամ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գործատուի անունը, հաշվառման վայրը)

այսուհետ՝ Գործատու, ի դեմս **անհատ ձեռնարկատեր ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ,**
(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

որը **գործում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի 17.02.2005 թ. գրանցված կանոնադրության** հիման վրա, մյուս կողմից և (կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)

ԱՍԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՍԵՆ, անձնագիր AU0583080 տրված 14.01.2022 թ. 006 կողմից, ՀԾՀ 1124020438, Ավան, Հ. Հովհաննիսյան թաղ. 27 շենք, բն. 4

(ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձի ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը, տալու օրը, ամիսը, տարեթիվը (կամ հանրային ծառայությունների համարանիշը), հաշվառման վայրը, իսկ ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ նաև ներկայացուցչի անունը, ազգանունը, լիազորագիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)

այսուհետ՝ Շահառու, մյուս կողմից, (բոլորը միասին համատեղ հիշատակման դեպքում, այսուհետ՝ Կողմեր), արտահայտելով միմյանց հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը և ձգտումները, հաշվի առնելով Հայաստանի

Հանրապետության կառավարության 2022 թ. հուլիսի 21-ի N 1179-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի 3-րդ գլխով սահմանված պահանջները և Կողմերի միջև կայացած բանակցությունների արդյունքները, թղթային տարբերակով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ներքոհիշյալի վերաբերյալ:

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի առարկան Տարածքային կենտրոնի կողմից Գործատուին աջակցության տրամադրումն է՝ Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թթ. սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած Շահառուի մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպման և առնվազն մեկ տարի ժամկետով զբաղվածության ապահովման համար:

2. Պայմանագրի համաձայն՝

1) Գործատուն պարտավորվում է իր մոտ կազմակերպել Շահառուի մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը՝ ապահովելով Շահառուի առնվազն մեկ տարի ժամկետով զբաղվածությունը, միաժամանակ, ստանալով փոխհատուցում Շահառուի աշխատավարձի և աշխատավարձից հաշվարկվող հարկերի վճարման գծով,

2) Շահառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված ժամկետով ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու և աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու նպատակով,

3) Տարածքային կենտրոնը Գործատուին է տրամադրում դրամական միջոցներ՝ Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան, Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Տարածքային կենտրոնը պարտավորվում է՝

1) ըստ անհրաժեշտության, Գործատուին և Շահառուին տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ Ադրբեջանի կողմից 2016 և 2020 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ Շահառուի մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպման համար աջակցության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Գործատուին տրամադրել փոխհատուցում՝ Պայմանագրի 9-11-րդ կետերով սահմանված չափով, կարգով, ժամկետում և պայմաններին համապատասխան,

3) չմիջամտել Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

4) չհրապարակել և (կամ) երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն

տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի և Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

5) եռամսյակը մեկ իրականացնել Գործատուի կողմից Շահառուի աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպման ծրագրի կատարման ընթացքի մոնիթորինգ՝ նախարարի կողմից սահմանված՝ մոնիթորինգի և գնահատման կարգին համապատասխան:

4. Տարածքային կենտրոնն իրավունք ունի՝

1) Շահառուից և Գործատուից պահանջել Պայմանագիրը կնքելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով միմյանց միջև հաստատել աշխատանքային հարաբերություններ,

2) պահանջել Գործատուից Շահառուի հետ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային պայմանագրի պատճենը կամ էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը ներկայացնել Տարածքային կենտրոն,

3) մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրը Գործատուից ստանալ տեղեկատվություն՝ նախորդ ամսվա ընթացքում աշխատողների աշխատած օրերի վերաբերյալ՝ կցելով նախորդ ամսվա աշխատավարձի վճարման ցուցակը,

4) Պայմանագրով և օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ Գործատուից ամբողջությամբ հետ ստանալ ծրագրի շրջանակներում Շահառուի աշխատավարձի վճարման համար գործատուին փոխհատուցված ֆինանսական միջոցները,

5) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

5. Գործատուն պարտավորվում է՝

1) Պայմանագիրը կնքելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով Շահառուի հետ կնքել նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (մեկ դրույքով) աշխատանքային պայմանագիր՝ առնվազն մեկ տարի ժամկետով, իսկ սեզոնային աշխատանքի դեպքում՝ առնվազն 12 ամիս ժամկետով,

2) Շահառուի հետ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքային պայմանագրի պատճենը կամ էլեկտրոնային պատկերատպված (սքանավորված) տարբերակը ներկայացնել Տարածքային կենտրոն,

3) աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա երկրորդ աշխատանքային օրը Տարածքային կենտրոն ներկայացնել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա ընթացքում աշխատողների աշխատած օրերի վերաբերյալ՝ կցելով նախորդ ամսվա աշխատավարձի վճարման ցուցակը,

4) մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը Տարածքային կենտրոն ներկայացնել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա համար Շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկի, դրոշմանիշային վճարի և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարի վճարման վերաբերյալ,

5) պատշաճ կերպով կազմակերպել Շահառուի՝ երեք ամիս տևողությամբ մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը,

6) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում Շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ,

7) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել Շահառուի աշխատանքի էական պայմանները կամ Շահառուի համար չսահմանել առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի,

8) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետից շուտ Շահառուին աշխատանքից ազատելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Տարածքային կենտրոնին՝ ոչ ուշ, քան աշխատանքից ազատելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում,

9) Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից իրեն վճարված գումարից Շահառուին վճարել աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով,

10) Պայմանագրով և օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ Տարածքային կենտրոն վերադարձնել ծրագրի շրջանակներում Շահառուի աշխատավարձի վճարման համար իրեն փոխհատուցված ֆինանսական միջոցները:

6. Գործատուն իրավունք ունի՝

1) պահանջել Տարածքային կենտրոնից չմիջամտելու Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

2) պահանջել Շահառուից ոչ ուշ, քան Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը,

3) Տարածքային կենտրոնից պահանջել տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող Շահառուի մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպման համար աջակցության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

4) Շահառուի հետ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո Տարածքային կենտրոնից ստանալ փոխհատուցում՝ Պայմանագրի 9-11-րդ կետերով սահմանված չափով, կարգով, ժամկետում և պայմաններին համապատասխան,

5) Տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել և (կամ) երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային

կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

6) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

7. Շահառուն պարտավորվում է՝

1) Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Գործատուին ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը,

2) Գործատուի հետ համաձայնեցված ժամկետում Գործատուի մոտ ընդունվել աշխատանքի՝ առնվազն Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով,

3) Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետից շուտ աշխատանքից ազատվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Տարածքային կենտրոնին՝ ոչ ուշ, քան աշխատանքից ազատվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Շահառուն իրավունք ունի՝

1) Տարածքային կենտրոնից պահանջել տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող Շահառուի մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացի կազմակերպման համար աջակցության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Գործատուից պահանջել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան, Շահառուին ընդունել աշխատանքի՝ առնվազն Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով և պատշաճ կերպով կազմակերպել իր մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը,

3) Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում իր համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ,

4) Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել իր աշխատանքի էական պայմանները կամ իր համար չսահմանել առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի,

5) Տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

6) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Պայմանագրի համաձայն Գործատուին տրամադրվում է փոխհատուցում՝

1) Շահառուի աշխատավարձի վճարման համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով, ամսական կտրվածքով, երեք ամիս ժամկետով,

2) Շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը փոխհատուցելու համար երեք ամիս ժամկետով՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 25 000 (քսանհինգ հազար) դրամի չափով և ինն ամիս ժամկետով՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50 000 (հիսուն հազար) դրամի չափով:

10. Աջակցությունը տրամադրվում է ամսվա լրիվ աշխատած օրերի համար, ընդ որում, ոչ լրիվ աշխատած ամսվա համար փոխհատուցման գումարի չափը հաշվարկվում է՝ փոխհատուցման ամսական գումարը բաժանելով տվյալ ամսվա աշխատանքային օրերի թվի վրա և բազմապատկելով լրիվ աշխատած օրերի թվով:

11. Ժամանակավոր անաշխատունակության և նպատակային արձակուրդում գտնվելու ժամանակահատվածների համար Գործատուին փոխհատուցում չի տրամադրվում:

12. Պայմանագրի 9-րդ կետում նշված դրամական միջոցները Գործատուին են վճարվում Որոշման հավելվածի 3-րդ գլխով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

IV. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

13. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երկու ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

V. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

14. Ծրագրի շրջանակներում Շահառուի աշխատավարձի վճարման համար Գործատուին փոխհատուցված ֆինանսական միջոցները «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ենթակա են ամբողջությամբ վերադարձման Գործատուի կողմից՝ Որոշման հավելվածի 25-րդ կետով նախատեսված դեպքերում:

15. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում են գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

VI. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

16. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործվող,

3) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

4) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունք,

5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

17. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

18. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

20. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

21. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են կողմերի համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

22. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

23. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

24. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետի ավարտը: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

25. Տարածքային կենտրոնը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և վաղաժամկետ լուծել այն, եթե Պայմանագիրը կնքելուց Շահառուն չի ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ՝ առնվազն Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով կամ Գործատուն կամ Շահառուն թույլ են տվել Պայմանագրի էական խախտում:

26. Պայմանագիրը կազմված է հայերենով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակներից, որոնցից Տարածքային կենտրոնին, Գործատուին և Շահառուին տրամադրվում է մեկական օրինակ:

IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարածքային կենտրոն՝

Միասնական սոցիալական ծառայության

Նոր Նորքի և Ավանի տարածքային կենտրոն

Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Խուդյակովի 153 շենք

Հեռ (060) 652741,

Էլ. փոստ. info@socservice.am , www. socservice.am

ի դեմս տնօրեն ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷԴԳԱՐ

(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

(ստորագրություն)

Կ.Տ.

29 նոյեմբեր 2022 թ.

Գործատու՝

«ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» ԱՁ
(գործատուի անվանումը)

Գտնվելու վայրը ք. Երևան, Եր. Քոչար փող. 13 շենք, 124 տարածք

Հեռ. (091) 407 388, (096) 566 441

Էլ. փոստ info@karen-dent.com

Հ/հ 220319601351000 «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»

ՀՎՀՀ 23109413

ի դեմս անհատ ձեռնարկատեր ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

(ստորագրություն)

Կ.Տ.

29 նոյեմբեր 2022 թ.

Շահառու՝

ԱՍԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՍԵՆ
(ազգանունը, անունը)

Բնակության վայրը՝ Ավան, Հովհաննիսյան թաղ. 27 շենք, բն.4
Հեռ. 091787848
Էլ. փոստ. arsenascaturyan@mail.ru

(ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝
ներկայացուցչի անունը, ազգանունը)

(Շահառուի կամ ներկայացուցչի ստորագրությունը)

29 նոյեմբեր 2022 թ.